

**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ԱՍԱՏՐՅԱՆԻՆ**

ԴԻՄՈՒՄ

Դիմումատու

Իրավաբանական անձի անվանումը՝ **«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն:**

Գործունեության հասցե՝ **0009 Երևան, Կորյուն 19ա:**

Հեռախոսահամար(ներ)՝ **58-91-86; 56 01 43**

Էլեկտրոնային փոստի հասցե(ներ)՝ **bridge@arminco.com**

Դիմումի առարկան

Կազմակերպությունը ցանկանում է ընդգրկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Այդ կապակցությամբ սույն դիմումին կից ներկայացվում է՝ (1, 2, 7, 8 կետերով նշված փաստաթղթերը պարտադիր են)

1. Կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճեն (կից է),
2. Կանոնադրություն (կից է),
3. Սոցիալական պաշտպանության ոլորտում մասնագիտական փորձառության առկայությունը հավաստող փաստաթղթեր («Հույսի կամուրջ» ՀԿ-ն հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության ոլորտում ունեցած իր ներդրած ավանդի և գործունեության համար արժանացել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն ոսկե հուշամեդալներին, ՀՀ վարչապետի հուշամեդալին: 2014 թվականին արժանացել է ՅՈՒՆԵՍԿՈՅԻ միջազգային մրցանակին: Հավաստիացումները կից են:),
4. Ոլորտին առնչվող հրապարակումներ, փորձագիտական աշխատանքների մասին փաստաթղթեր (Կցված են «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից թարգմանված և հրատարակված կարևորագույն միջազգային փաստաթղթեր և մեթոդական ուղեցույցներ, մասնավորապես՝ ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կոնվենցիան և սույն կոնվենցիայի հեշտ ընկալելի և ընթերցելի տարբերակը («Հույսի կամուրջ» ՀԿ-ի հեղինակային իրավունքով), «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ուղեցույց խորհրդարանների համար», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի մոնիթորինգի ուղեցույց», «ԱՀԿ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգում»: «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից մշակվել և հեղինակային իրավունքով հրատարակվել են «ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության» կոնվենցիայի նկարագրող, հեշտ ընկալելի և ընթերցելի տարբերակը, «Սոցիալական ոլորտի բառարան», «Սոցիալական աշխատանքը ընտանիքում»,

Մտից № 3/17592-16
«14» 05 2016

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության աշխատանքի և
սոցիալական հարցերի բաժնի

«Գիրք հարցման», «Ինչպես խոսել հաշմանդամության թեմայով» և այլն: 2012-2013թթ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում իրականացրած հետազոտություն ըստ ԱՀԿ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միաջազգային դասակարգման: Հետազոտության նպատակն էր պարզելու հաշմանդամության իրական մակարդակը և նախադրյալներ ստեղծել մարզի մակարդակում հաշմանդամություն և/կամ սոցիալական, առողջական խնդիրներ ունեցող երեխաների վաղ հայտնաբերման, գնահատման, ուղղորդման և ծառայությունների մատուցման համակարգված և օրինակելի մոդելի ձևավորման համար, որը էական աջակցություն կլինի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նախաձեռնած սոցիալական ոլորտի բարեփոխումներին, մասնավորապես ինտեգրացված սոցիալական ծառայությունների ներդրմանը: Նշված բոլոր հրատարակումներն ու վերլուծությունը կից են):


5. Նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը հիմնավորող փաստաթղթեր («Հուլիսի կամուրջ» ՀԿ-ն «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի» և «ՀՀ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղով ազգային հանձնաժողովի» անդամ է: Հավաստիացումները կից են:),
6. Կազմակերպության կողմից լիազորված անձի մասին փաստաթուղթ (տեղեկանք),
7. Փաստաթղթեր (տեղեկություններ) լիազորված անձի՝ Խորհրդի կազմում ընդգրկվելու համար նախատեսված պահանջներին համապատասխանության մասին: (բոլոր փաստաթղթերը կից են):

Կազմակերպությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տվյալ պահին ֆինանսավորում և/կամ դրամաշնորհ

ստանում է ☒

չի ստանում ☐

Դիմող՝
Սուսաննա Թադևոսյան
(«Հուլիսի կամուրջ» ՀԿ նախագահ)



<17> մայիս 2016թ.

Հանրապետություն
ՀՀ կառավարության 2001 թվականի
հունիսի 4-ի N 601 որոշմամբ

Ն Ե Ր Դ Ի Ր 003

իրավաբանական անձի պետական գրանցում վերականգնել


Վկայական 039 061729

Ամսաթիվ , , ՀԱՌՑԱԿՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԵՐԻ իՐԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ
ԱՆՁՍԵՐԻ ԳՈՐԾԻՆԵՐԸ

Գտնվելու վայրը (հասցեն) 0009 22 թ. Երևան, Կոմիտասի պ. 19ա

Այլ տեղեկություններ Հաղորդակցվել է լինելու վերաբերյալ :
12.08.09թ.

Ներդիրն ուժի մեջ է վստահանել հետ



1 ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Ամսաթիվը

12.08.09 թվական 2009 թ.

ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ


ՆԵՐԴԻՐ 002

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

վկայական 03Ա 061728

Անվանումը , , ՀՈՒՑՍԻ ԿԱՄՈՒՐՔ , , ՀԱՇՄԱՆԴԱՄ

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը (հասցեն) 


Այլ տեղեկություններ Անվանաճան փոփոխության, նոր

խմբագրության կանոնադրության 23.05.07թ.

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ


(ստորագրություն)

23 մայիսի 2007թ.

Ֆորմ 4-ի N 601 կրկնաթիվ

Ներդիր

001

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական

03Ա 061728

Անվանումը

„ՀՈՒՅՍՆ ԿԱՄԻՏԷ“, ՀԱՍՈՐԱՊԱՄԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆ

2

Գտնվելու վայրը (հասցեն)

375038, ք. Երևան

Էստեմական փող. 212, քն. 22

Այլ տեղեկություններ նախատեսված ստիպասին ՔԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՆՃ. ՍԲ 0384245 տրվ. 06.08.97թ. 012 կողմից

Բն. վայրը՝ ք. Երևան, Էստեմական փ. 212, քն. 22

Գրանցված է 22 Արդարադատության նախարարության

կողմից 14.02.97թ. 6/1-1 որոշմամբ, նախարարի

29.11.99թ. թիվ 1959 հրամանով

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

[Signature]
Կարգադրություն

22 օգոստոսի 2003 թ.

Խույզի 4-ի N 601 որոշմամբ

Ներքին 001

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական

030 061728

Անվանումը

ՀՈՒՅՍԻ ԱՄԹԻՈՂԷ, ՀԱՍԱՐԱՆԱԿԱՆ

ԱՎԱՅՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2

Գտնվելու վայրը (տասնեն)

375038, ք. Երևան

Խառնական փող. 212, քմ. 22

Այս տեղեկությունները նախատեսված են ՍՈՒՍԱՆՆԱ ՔԱՂԵՊՈՍՅԱՆ
ԱՆՃ. ԱՐ 0384245 արվ. 06.08.97թ. 012 կողմից
ԲՆ. ՎԱՅՐՔՐԵՐԵԼԻԱՆ, Խառնական փ. 212, քմ. 22
Գրանցման է 22 Արդարադատության նախարարության
կողմից 14.02.97թ. 6/1-1 որոշմամբ, նախարարի
29.11.99թ. թիվ 1959 հրամանով

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

[Signature]
(ստորագրություն)

22 օգոստոսի 2003 թ.

Համապատասխան
ՀՀ Կրթության և գիտության նախարարության
Հրահանգ 4-Ն ՄԾ Բնակավայր

14030406

03.06.1728

Իրավաբանական անդրադարձման գրանցում

1. ՀԱՆՐԱՅՈՒՆ՝ ԿՐԹՈՒՄ, ՀԱՄԱՐՈՒՄՆԵՆ ԿԱԶՄԱՆԵՐՈՒՄՈՒՄ

Հանգանակ

Գրանցման համարը ԿՐԹՈՒՄՆԵՆ ԿԱԶՄԱՆԵՐՈՒՄՈՒՄ ԿԱԶՄԱՆԵՐՈՒՄ

Կրթության նախարարության կողմից

Գրանցման համարը 211.171.01966

Գրանցման տարին, ամիսը, օրը 21.08.2003թ.


Իրավաբանական անդրադարձման կոդը 39091830

Իրավաբանական անդրադարձման կոդը Հոյ ԿՐԹՈՒՄՆԵՆ


Գրանցմանը ժամկետը մինչև անժամկետ

Վավերացման օրը և ստորագրությունը

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ



(արտոգրություն)

22.08.2003 թ.



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է


«Հուլիսի Կամուրջ» հաշմանդամ
երեխաների և երիտասարդների
իրավունքների պաշտպանության
հասարակական կազմակերպության
14-ը հուլիսի 2009թ. ընդհանուր
ժողովի որոշմամբ
Կազմակերպության նախագահ
Սուսաննա Թադևոսյան



Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ 4

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց
Պետական Ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից
Գրանցման օրը, ամիսը,
տարեթիվը 21.08.2003թ.
Գրանցման համարը 211.171.01.966
Պետական գրանցման վկայականի
համարը 03Ա061728
Թիվ 1-3 փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց
Պետական Ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից
«12» 08 2009թ.
Պետական ռեգիստրի ղեկավար
Արմեն Գևորգյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

«ՀՈՒՅԻՍԻ ԿԱՄՈՒՐՋ»

Հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների
պաշտպանության Հասարակական կազմակերպություն
(փոփոխություն)

21.08.2003թ. գրանցված կանոնադրության 1.5 կետը շարադրել հետևյալ ձևով.


1.5 Կազմակերպության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն ք. Երևան,
Կորյունի փ. 19ա:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հուլիսի Կամուրջ» Հաշմանդամ երեխաների և
երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության
կանոնադրության անբաժան մասը (գրանցված է ՀՀ Պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից 21.08.2003թ):

ք. Երևան 2009թ.

Հաստատված է
«Հուլիսի Կամուրջ»
հաշմանդամ երեխաների
և երիտասարդների
իրավունքների պաշտպանության
հասարակական կազմակերպության

Ընդհանուր ժողովի որոշմամբ



Տպագրված է «5» օրինակ,
Օրինակ N 1
Գրանցված է
Պետոճեզիստրի կենտրոնական
մարմնի կողմից
Գրանցման օրը, ամիսը
տարեթիվը 21.08.2003թ.
Գրանցման համարը 211.171.01.966
Պետական գրանցման
վկայականի համարը 03Ա061728
Թիվ 1-2 փոփոխությունը գրանցված է

«29»-----05-----2007թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ս. Մարտիրոսյան



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ»

ՀԱՇՎԱՆԴԱՄԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «ՀՈՒՅՍԻ ԿԱՍՈՒՐԶ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) իր անդամների շահերի ընդհանրության հիման վրա, հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր հասարակական միավորման տեսակ է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.2. Կազմակերպությունը գործում է օրինականության, կամավորության, անդամների իրավահավասարության, ինքնակառավարման, անդամության կամավորության, ղեկավարման կոլեգիականության և հրապարակայության սկզբունքներով:
- 1.3. Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ, չի հարում որևէ քաղաքական հոսանքին:
- 1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Էստոնական 21, բն. 22:
- 1.6. Կազմակերպության անվանումն է՝ հայերեն «Հույսի կամուրջ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն, անգլերեն՝ “Bridge of Hope” public organization for the protection of rights of children and youth with disabilities:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Կազմակերպության նպատակն է պաշտպանել հաշմանդամ երեխաների և երիտասարդների ու նրանց ընտանիքների իրավունքներն ու արժանապատվությունը և նպաստել նրանց սոցիալական ներառմանը Հայաստանի Հանրապետությունում:
- 2.2. Կազմակերպության խնդիրներն են՝
 - Աջակցել կրթության մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովմանը հաշմանդամ և կրթության այլ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և երիտասարդների համար:
 - Աջակցել հաշմանդամ երեխաներին զարգացնելու իրենց մտավոր, ֆիզիկական ու հոգևոր կարողությունները և համայնքում անկախ ու լիարժեք ապրելու սոցիալական հմտությունները:
 - Հայաստանի Հանրապետությունում գործող և կամ մշակվող քաղաքականություններում, օրենքներում, գործընթացներում, ինչպես նաև հասարակական ընկալման և համոզմունքների մեջ հասնել այնպիսի փոփոխությունների, որոնք վճռորոշ նշանակություն ունեն հաշմանդամ աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց կյանքի որակի, հասարակական կյանքին համակողմանի մասնակցության ու հավասար հնարավորությունների ապահովման համար:
 - Մշտապես զարգացնել կազմակերպության ինստիտուցիոնալ կարողություններն ու հզորությունները՝ առաջադրված նպատակին հասնելու համար:
- 2.3. Կազմակերպությունը իր նպատակների ու խնդիրների իրականացումը կառուցում է ներառական և մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների վրա և օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործողությունները՝
 - Սերտ և կառուցողական համագործակցություն ՀՀ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ իրավաբանական ու ֆիզիկական

անձանց հետ՝ Հայաստանում հաշմանդամ անձանց համար հավասար հնարավորությունների ստեղծման և նրանց իրավունքների պաշտպանության նպատակով:

- Համագործակցություն ՀՀ պետական մարմինների հետ՝
 - աջակցելու հաշմանդամ անձանց իրավունքների և սոցիալական պաշտպանությանն ուղղված օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների մշակմանն ու իրականացմանը, այդ ամենի շուրջ հասարակության մեջ իրազեկության բարձրացմանը:
 - Հայաստանում տարածելու ներառական կրթության փորձը հանրակրթական, արհեստագործական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում:
 - Աջակցելու ներառական կրթության թեմաներով ուսուցիչների և դասախոսների վերապատրաստումների կազմակերպմանը:
 - Բարձրացնելու ուսուցիչների և դասախոսների իրազեկությունը հաշմանդամ անձանց հիմնախնդիրների մասին:
 - Մասնակցելու և աջակցելու կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
- Ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, և սոցիալական վերականգնողական ծառայությունների հիմնում և մատուցում:
- Աջակցություն երեխաների կրթության հատուկ կարիքի գնահատման մեխանիզմների և գործիքների ստեղծմանը և իրականացմանը:
- Հաշմանդամության թեմաներով սեմինարների ու դասախոսությունների կազմակերպում և իրականացում կրթության և սոցիալական ոլորտի համապատասխան մասնագետների համար:
- Հաշմանդամ երեխաների ծնողների կրթություն, ծնողական փոխօգնության խմբերի ստեղծում և նրանց կարողությունների հզորացում:
- Երեխաների և երիտասարդների փոխօգնության խմբերի ստեղծում և նրանց կարողությունների հզորացում:
- Դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում կազմակերպության անդամների և աշխատակազմի համար:
- Սերտ համագործակցություն Չանգվածային լրատվամիջոցների հետ, լրագրողների համար սեմինարների և դասախոսությունների կազմակերպում:
- Ամսաթերթի և տեղեկատուի, գրքույկների, պոստերների, հրատարակում, հանրային ելույթների և քարոզարշավների կազմակերպում:
- Ֆիլմերի և տեսաձայնային հղովակների ստեղծում և լրատվամիջոցներով հեռարձակում:
- Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ:
- 2.4. Կազմակերպությունը ՀՀ պետական մարմիններին կարող է ներկայացնել իր կանոնադրական դրույթներից բխող առաջարկություններ:
- 2.5. Կազմակերպությունը կարող է ստեղծել տնտեսական ընկերություններ, ունենալ լրատվական միջոցներ և, ինֆորմացիոն կենտրոններ, պարբերական հրատարակության ուսումնական կենտրոն, ճյուղային սեկցիաներ և հատուկ հանձնաժողովներ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել և տնօրինել նյութական միջոցներ:
- 2.6. Կազմակերպությունը կարող է իրականացնել այլ գործունեություն, որը չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

3. ԼՈՍՏԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

- 3.1. Լոստակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ ՀՀ տնտեսական ռեգիստրի կողմից Կազմակերպության պետական գրանցման պահից:
- 3.2. Լոստակերպությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ՝
- ա) ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ թե ՀՀ և թե օտարերկրյա արժույթով.
 - բ) իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ քույքային իրավունքներ և կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 3.3. Լոստակերպությունը ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:
- 3.4. Լոստակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝
- ա) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.
 - բ) ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական տեղական ինքնակառավարման մարմիններում:
 - գ) համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն իրականացնելու, Ընդհանուր շահեր ներկայացնելու և, պաշտպանելու նպատակով, այլ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ, կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.
 - դ) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն իր կողմից հիմնադրված անտեսական ընկերությունների միջոցով.
 - ե) օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք.
 - զ) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ.
 - է) օտարել, կամ վարձակալության և օգտագործման հանձնել կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ գույք,
 - ը) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում արտարժույթով.
 - թ) օրինալ միջոցներ արտարժույթով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել կամ ստանալ և օգտագործել տնօրինել.
 - ժ) անդամներին գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից օգնաբաժիններ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությամբ համապատասխան:
 - 3.5. Լոստակերպությունը իրավունք ունի իրականացնել իր կանոնադրությամբ նախատեսված և օրենքով չարգելված այլ գործունեություն,
 - ի) կազմակերպել մրցաշարեր, ուսուցողական սեմինարներ, այդ թվում նաև միջազգային,
 - յ) օգնություններ և օգնություններ տրամադրել լրատվության միջոցներ ,

- խ) **ստեղծել** առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմարկներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպությունը պարտավոր է՝

- 4.1. **Ցանկացած** ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան յոթ օրացույցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը:
- 4.2. **Օրենքով** սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:
- 4.3. **Վարել** իր անդամների հաշվառումը:
- 4.4. **Իր** գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության ժողովի հաստատմանը, ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը:
- 4.5. **Օրենքով** նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ:
- 4.6. **ՀՀ** արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում, նրան տրամադրել Կազմակերպության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ճերկայացուցիչներին ներկա գտնվելու Կազմակերպության ժողովին:
- 4.7. **Առանձնացված** ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար:
- 4.8. **Օրենքով** նախատեսված այլ պարտականություններ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Կազմակերպությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով՝ օրենքով սահմանված կարգով:
- 5.2. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:
- 5.3. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, ինչպես որ վերջիններս պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Եթե Կազմակերպությունն իր անօրինական գործունեությամբ վնաս է հասցրել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պարտավոր է այն հատուցել իր գույքի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:
- 5.4. **Պետությունը** ապահովում է Կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության գործունեությանը միջամտելն արգելվում է, թացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- 5.5. Կազմակերպությանը հասցված վնասը, որը հետևանք է պետական կամ այլ մարմինների, կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության իրավունքների խախտման ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման, ենթակա է փոխհատուցման այդ մարմինների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- 5.6. **Անձի** անդամակցությունը Կազմակերպությանը չի կարող հանդիսանալ նրա **կազմակերպության** և ազատությունների սահմանափակման հիմք, պետական **մարմիններում** պաշտոն զբաղեցնելու պայման կամ արգելք:
Արգելվում է Կազմակերպության անդամությունը նշելու պահանջը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

- 6.1 **Կազմակերպության** անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած **անձ, որը** ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:
Կազմակերպության անդամ դառնալ ցանկացող անձինք Կազմակերպության **նախագահություն** (այսուհետև՝ **նախագահություն**) պետք է ներկայացնեն զբաղվող **դիմում** մուծելով մուտքի վճար, որի չափը և վճարման կարգը սահմանվում է **նախագահության** կողմից:
- 6.2 **Կազմակերպության** անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է կազմակերպության **նախագահությունը**: Կազմակերպության անդամության մեջ ընդունելու մասին դիմումի **մերժումը** զանգատարկման ենթակա չէ:
- 6.3 **Կազմակերպության** անդամները մուծում են անդամավճար, որի չափն ու վճարման **կարգը** սահմանվում է Կազմակերպության **նախագահության** կողմից:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 7.1. **Կազմակերպության** անդամն իրավունք ունի՝
- ա) **ներկա** գտնվել Կազմակերպության ժողովին, եթե վերջինս անցկացվում է Կազմակերպության անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ **չի** ընտրվել,
 - բ) **ցանոթանալ** Կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները (**պատճենների տրամադրման համար** զանձվող վճարը չի կարող գերազանցել **դրանց** պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը),
 - գ) **Կազմակերպության** մարմինների որոշումները բողոքարկել Կազմակերպության **վերադաս** մարմիններ՝ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված **կարգով**,
 - դ) **Կազմակերպության** մարմնի (այդ թվում՝ բարձրագույն մարմնի) որոշումը, որն **ընդունվել է** օրենքի, Կազմակերպության կանոնադրության կամ վերադաս **մարմինների** որոշումներով սահմանված կարգի խախտմամբ, կամ ոտնահարել է Կազմակերպության կամ Կազմակերպության անդամի իրավունքներն ու **օրինական** շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել **Կազմակերպության** անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 **օրվա** ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամը իմացել է **կամ** պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով **այլ** բան սահմանված չէ:
- 7.2. **Կազմակերպության** անդամը պարտավոր է՝
- ա) **հաշվառել** Կազմակերպության հեղինակության բարձրացման մասին.
 - բ) **կատարել** Կազմակերպության կանոնադրական պահանջները, դեկավար **մարմինների** որոշումները.
 - գ) **աջակցել** Կազմակերպության անդամության համալրմանը.
 - դ) **մուծել** մուտքի վճար և անդամավճար.
 - ե) **բաղնախոսել** կատարել իր վրա դրված պարտականությունները: Կազմակե-
րպության կանոնադրության, կարգապահական կանոնները խախտող Կազ-

մակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության Ընդհանուր ժողովի կամ
Մախագահության կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝
ընդհուպ Կազմակերպության անդամությունից հեռացումը:

7.3. Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին Կազմակերպության
Մախագահության որոշումը կարող է զանգատարկվել Կազմակերպության Ընդհանուր
ժողովին:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

- 8.1. Կազմակերպության բարձրագույն մարմինը Ընդհանուր ժողովն է, որին
պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկա-ցած
հարցի վերջնական լուծման իրավունքը:
- 8.2. Կազմակերպության Ընդհանուր ժողով հրավիրվում է յուրաքանչյուր երկու տարին
մեկ անգամ: Նախագահության կողմից ժողովի օրակարգի, նրա աշխատանքն
սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները տեղյակ են պահվում ոչ ուշ
քան ժողովի անցկացման օրվանից 14 օր առաջ: Կազմակերպության անդամների
1/3-ի կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի)
պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա
ընթացքում, հրավիրվում և տեղի է ունենում Կազմակերպության արտահերթ ժողով:
- 8.3. Կազմակերպության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
- ա) Կազմակերպության կանոնադրության ընդունումը, նրանում փոփոխություն-ների ու
լրացումների կատարումը.
 - բ) Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվու-
թյունների հաստատումը,
 - գ) Երկու տարի ժամկետով Կազմակերպության մախագահության, մախագահի,
վերահսկիչ հանձնաժողովի, պատասխանատու քարտուղարի ընտրումը և ետ
կանչումը և կազմի փոփոխումը.
 - դ) Կազմակերպության լուծարումն ու վերակազմակերպումը:
Սույն կետով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումներն
ընդունվում են Կազմակերպության բոլոր մասնակիցների երկու երրորդի
մեծամասնությամբ: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են ձայների պարզ
մեծամասնությամբ:
- 8.4. Կազմակերպության Ընդհանուր ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ
կայացնել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության անդամների կեսից
ավելին:
- 8.5. Կազմակերպության մախագահությունն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից
երկու տարի ժամկետով: Նա իր աշխատանքներն իրականացնում է միստերի ձևով,
որոնք հրավիրվում են յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ: Նախագահության
անդամների մեկ երրորդի կամ մախագահի պահանջով կարող են հրավիրվել
արտահերթ միստեր:
- 8.6. Նախագահությունը՝
- ա) հանդիսանում է Կազմակերպության ղեկավար մարմինը ժողովների միջև ընկած
ժամանակահատվածում,
 - բ) առաջարկություններ է ներկայացնում կազմակերպության Ընդհանուր ժողովին՝
նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,
 - գ) ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում է անդամությունից.
 - դ) Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և
տույժի միջոցներ.

- ե) **վարձում** է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը Ընդհանուր ժողովների **միջև** ընկած ժամանակաշրջանում.
- զ) **ստանձնում** է Կազմակերպության կարգապահական կանոնները և հրահանգները.
- է) **ստանձնում** է Կազմակերպության կողմից անդամների կողմից անդամավճարների **մածման** կարգը, չափերը և ձևերը.
- ը) **ստանձնում** ու լուծարում է Կազմակերպության կառուցվածքային միավորում-ները, **ստանձնագրված** ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուց-չություններ), **ինչպես** նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.
- թ) **ընդունում** է որոշումներ Կազմակերպության պաշտոնատար անձանց գույքային **սպասարկման** անվտանգության ենթարկելու մասին.
- ժ) **իրավասու** է որոշումներ ընդունել գույք ձեռք բերելու, տիրապետելու, **օգտագործելու**, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ՝ **անկախ** գույքի տեսակներից և չափերից.
- ի) **իրավունք** ունի քննել ու լուծել ցանկացած հարց, բացառությամբ **Կազմակերպության** Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը **վերապահվածներից**:
- 8.7. **Կազմակերպության** նախագահությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ **կայացնել**, եթե նրան մասնակցում է նախագահության անդամների կեսից ավելին: **Նախագահության** որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: **Ձայների** հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:
- 8.8. **Կազմակերպության** նախագահն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից երկու **տարի** ժամկետով: Նա ի պաշտոնե հանդիսանում է նախագահության նախագահը:
- 8.9. **Կազմակերպության** նախագահը՝
- **իրականացնում** է Կազմակերպության ընթացիկ ղեկավարումը.
 - **հրավիրում** է նախագահության նիստեր , կոորդինացնում է նախագահության **գործունեությունը**.
 - **Կազմակերպության** նախագահն իր պաշտոնը ստանձնում է նախորդ **նախագահի** լիազորությունների ավարտման օրը.
 - **իր** կողմից իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի գործում է **Կազմակերպության** անունից, ներկայացնում է դրա շահերը, այդ թվում **ֆինանսական** ռեսուրսները, կնքում է պայմանագրեր, այդ թվում և **աշխատանքային**, Կազմակերպության վարձու աշխատողների համար **իրականացնում** է գործա-տուի ֆունկցիաներ, տալիս է հաշիվներ, հաստատում է **հաստիքներ**, արձակում է հրամաններ, վարձու աշխատող-ներին տալիս է **կատարման** համար պարտադիր ցուցումներ:
- **Կազմակերպության** պատասխանատու քարտուղարը՝
- **ընտրվում** է Ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամկետով
 - **կոորդինացնում** է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների **աշխատանքները**
 - **կազմակերպում** է Կազմակերպության գործավարությունը
 - **Կազմակերպության** անդամագրության աշխատանքները
 - **տնօրինում** է Կազմակերպության արխիվը
 - **կատարում** է Կազմակերպության նախագահի կողմից իր վրա դրված առանձին **լիազորություններ**
- 8.10. **Իրենց** չարդարացված կազմակերպության բոլոր ընտրովի պաշտոնատար անձինք **կարող** են ժամկետից շուտ ետ կանչվել իրենց ընրողների կողմից: **Կազմակերպության** նախագահը և ղեկավար մարմնում ընդգրկված այլ անձինք **Կազմակերպության** կողմից կարող են վարձատրվել, եթե նրանց մշտական **աշխատանքի** վայրը համարվում է կազմակերպությունը: Կազմակերպության

դեկավար մարմնում ընդգրկված վերոհիշյալ անձանց վարձատրության չափը սահմանում է Կազմակերպության նախագահությունը:

8.11. Կազմակերպությունը կարող է ունենալ վերահսկիչ հանձնաժողով (կամ վերահսկիչ) կամ անկախ վերահսկիչ՝ աուդիտոր:

- Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը ընտրվում է է Ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամկետով:

- Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է: Վերահսկիչը որոշումներ է ընդունում միանձնյան:

- Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը (վերահսկիչը) իրավասու է՝
ա/ ցանկացած ժամանակ անցկացնել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

- բ/ ծանոթանալ Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել կազմակերպության մարմիններ:

- գ/ Կազմակերպության պաշտոնատար անձանցից, անդամներից ու աշխատողներից պահանջել, ստանալ գրավոր և բանավոր տեղեկատվություն:

- դ/ իրականացնել Կազմակերպության կանոնադրությունից, կամ բարձրագույն մարմնի որոշումներից բխող այլ լիազորություններ:

- Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել կազմակերպության Ընդհանուր ժողովին Կազմակերպության գործունեության արդյունքների, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների մասին:

- Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ կամ վերահսկիչ չեն կարող լինել նախագահության անդամները և նախագահը:

8.12. Կազմակերպության ղեկավար և վերահսկողությունն իրականացնող մարմինների անդամ կարող է դառնալ միայն 18 տարին լրացած անձը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

9.1. Կազմակերպությունը իր կանոնադրական նպատակները և խնդիրները իրականացնելու նպատակով կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9.2. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներն իրավաբանական անձ չեն, կարող են օգտվել Կազմակերպության կողմից տրամադրված գույքից և գործում են վերջիններիս կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:

9.3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ հիմնադրելու իրավունք ունի Կազմակերպության նախագահությունը, որն էլ հաստատում է նրանց կանոնադրությունները:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

10.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ՝ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ

գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունի:

- 10.3. Կազմակերպության գույքի ստացման աղբյուրներ կարող են լինել՝
- Կազմակերպության անդամների անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները, նրա կողմից գույքի տիրապետելու, այն օգտագործելու, ինչպես նաև այլ գույքային իրավունքների փոխանցումը.
 - բանկային հիմնարկներից ստացված վարկերը.
 - դրամաշնորհները
 - բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները.
 - Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները.
 - ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ մուտքեր և աղբյուրներ:
- 10.4. Հայաստանի Հանրապետության տարածքում Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:
- 10.5. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն օրենքով սահմանված կարգով:
- 10.6. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՑԱՐՈՒՄԸ

- 11.1. Կազմակերպության վերականգնակերպումը իրականացվում է նրա ԸՆդհանուր ժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Կազմակերպության Ընդհանուր ժողովը պարտավոր է Կազմակերպության վերականգնակերպման մասին հնգօրյա ժամկետում գրավոր հայտնել Կազմակերպության պարտատերերին:
- 11.2. Կազմակերպության լուծարումը՝ հանգեցնում է, դրա դադարեցմանը առանց իրավունքները և պարտականություններն իրավա-հաջորդության կարգով այլ անձանց անցնելուն:
- 11.3. Կազմակերպությունը կարող է լուծարվել Կազմակերպության Ընդհանուր ժողովի որոշմամբ կամ դատարանի որոշմամբ: Կազմակերպության ԸՆդհանուր ժողովը լուծարման մասին պարտավոր է հնգօրյա ժամկետում գրավոր հայտնել ՀՀ արդարադատության մախարարությանը: Կազմակերպության ԸՆդհանուր ժողովը ՀՀ արդարադատության մախարարության համաձայնությամբ կազմավորում է լուծարքային հանձնաժողով և օրենքով մախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:
- 11.4. Կազմակերպության լուծարման դեպքում լուծարքային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով օգտագործում է նրա կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե, իսկ վեճի առկայության դեպքում հարցը լուծում է դատարանը:
- 11.5. Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված կարգով:

3-14 4/4



United Nations
Educational, Scientific and
Cultural Organization



The UNESCO/Emir Jaber al-Ahmad al-Jaber al-Sabah Prize
to Promote Quality Education for Persons
with Intellectual Disabilities

has been awarded to

Bridge of Hope
(Armenia)

The Prize is awarded to the non-governmental organization, 'Bridge of Hope' from Armenia, for their extensive work in the promotion of inclusive education and quality of life for people with disabilities over the past 17 years. 'Bridge of Hope' has an impressive range of projects that promote human rights, as well as the social and educational inclusion of children and youth with disabilities.

Their leadership in engaging with key participants including government, ministries, international agencies, families, communities, schools and early childhood settings has contributed to significant improvements in inclusive education throughout the country.

Irina Bokova

Irina Bokova
Director-General

Kuwait, 26 May 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՋԱԳԵՏ



Երեւանի իրավունքների պաշտպանության օրվա կատարելությունը և
այդ բնագավառում երկարամյա ու բեղմնավոր գործունեության համար
«Դույնի կամուրջ» հաշմանդամ երեխաների հասարակական բարեգործական
կազմակերպությանը խոստովանելով ԳԳ վարչապետի շնորհակալագրով:

« 31 » օգոստոս 2007 թ.

№ 70


Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Երևան




ԻՍԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱՄԵԴԼ



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՇԽԱՆԻՔ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐԱԾ
ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ

«ՀՈՒՅՍԻ ԿԱՍՈՒՐ» ՀԱՄԱՐԱԿԱԶՄԻՆ ԿԱԶՄԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԳԱՀ ՍՈՒՍՐԱՆԱԾ ԹՄԴԵՎՈՍԹԱՆՈՆ

16 11 200 թ.



ՆԱԽԱՐԱՐ

ԼՈՐԵՆՏԻՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԴԵՏԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼ**

Պարզեցարժեք

ՍՈՒՍԱՆՆԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալով՝

հաշմանդամների միջազգային օրվա առթիվ և հաշմանդամների

հիմնադրոցների լուծման գործում ներդրած ավանդի ու այդ

ընագավառում երկարամյա գործունեության համար:

30 նոյեմբերի
№ 191

2007թ

Ամարյան

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ



Հանրապետության
Տնային Մարզ

ՊԱՏՎԱԿՈՐ ՏԱՎՈՒՇՅՈՒՆ


Շնորհակալ եմ

«Տնային կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ

ՍՈՒՍԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ

Տնային մարզում հիդրաւ մեծ աշխատի համար և
կազմակերպության 15-ամյակի առթիւ

ԿՏ Տնային Մարզպետ
Արմեն Դադարյան



17 սեպտեմբեր, 2011թ.



ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2008 թվականի դեկտեմբերի 23-ի

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
հուշամեղալով պարգևատրելու մասին» N 2628-Ա/4 հրամանից

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
ստեղծման 90-ամյակի կապակցությամբ, սոցիալական պաշտպանության
ոլորտի կայացման և զարգացման գործում ունեցած անձնական ներդրման
համար «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ
Սուսաննա Թադևոսյանին պարգևատրել ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարության 90-ամյակի հուշամեղալով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար

Ա. Համբարձումյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2012 թվականի N 1295 - Ն

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
28-Ի N 835-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 1055-Ն որոշման N 2 հավելվածի 60-րդ կետի՝

1. Ստեղծել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով:

2. Հաստատել՝

1) երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրությանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:


3. Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի աշխատանքային գործունեության կազմակերպական տեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի «Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին» N 835-Ն որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. դեկտեմբերի 28
Երևան



Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2012 թ.
դեկտեմբերի 28-ի N 1295 - Ն
որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԶԳՍՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երեխաների իրավունքներն պաշտպանության ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում դեկլարավորում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրության ամբում այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության և նույն երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանն աջակցելը.

2) երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականությանն ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման ապահովմանն աջակցելը.

3) երեխայի իրավունքներին և շահերին պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելը:

4) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրներին լուծմանն աջակցելը:

5) երեխայի իրավունքներին և շահերին պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, երեխաների խնամք և պաշտպանության իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատություններին, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպություններին համագործակցությունն աջակցելը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներին լուծման համար՝

1) քննարկում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերը:

2) ապահովում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերի իրականացման մոնիթորինգի իրականացումը՝ հանձնաժողովին կից ստեղծելով մոնիթորինգի աշխատանքային խումբ, քննարկում և հաստատում է մոնիթորինգի աշխատանքային խմբի տարեկան աշխատանքային պլանը և հաշվետվությունները, անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում շահագրգիռ մարմիններին:

3) քննարկում և առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին և տանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքացիական զործունեությանն ուղղված քաղաքացիներին դիմումների

և Բողոքներին վերաբերյալ՝ Բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերին:

4) առաջարկություններ են երկայացնում պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին հետևանքախառններին շրջանում իրավախախտումներին կանխարգելմանն ուղղված աշխատանքներին վերաբերյալ:

5) քննարկում է երեխաների իրավունքներին պաշտպանությանն ուղորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին կատարման ընթացքը և երկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման համար:

6) քննարկում է երեխայի իրավունքներին և շահերին պաշտպանությանն ուղորտի հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերին նախագծերը և դրանց մասին տալիս եզրակացություն:

7) ուսումնասիրում և վերլուծում է երեխայի իրավունքներին խախտման պատճառներն ու երկայացնում առաջարկություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

8) քննարկում է Հայաստանի Հանրապետության մարզպետներին, Երևանի քաղաքապետարանին ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքներին պաշտպանության Բաժիններին տարեկան ծրագրերին հաշվետվությունները և, ըստ անհրաժեշտության, երկայացնում առաջարկություններ:

9) առաջարկություններ են երկայացնում կյանքի ղեկավարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքներին պաշտպանության պետական ծրագրերի իրականացման վերաբերյալ:

10) ըստ անհրաժեշտության, կարող է իրականացնել ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության երեխաներին

իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական և մասնավոր հաստատությունների, ինչպես նաև երեխայի պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը:

11) աջակցում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի քննանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողներին վերապատրաստման գործընթացին:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

6. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից:

7. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է իր կողմից յուրաքանչյուր տարի հաստատվող աշխատանքային ծրագրի հիման վրա:

8. Հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել աշխատանքային խմբեր:

9. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

10. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքներով:

11. Հանձնաժողովի որոշումներն ունեն երաշխավորական բնույթ:

12. Հանձնաժողովի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում

արտահերթ նիստեր կարող են գումարվել հանձնաժողովի նախագահի կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

13. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

14. Հանձնաժողովը պետական կառավարման մարմիններից կարող է ստանալ երեխաների պաշտպանության հարցերին առնչվող նյութեր, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Հանձնաժողովի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստը կայանալու օրվանից մեկ շաբաթ առաջ: Հանձնաժողովի նիստն իրավագործ է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն:

15. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների գրավոր կարծիքները (դրանց առկայության դեպքում) կցվում են արձանագրությանը: Հավասար ձայների առկայության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

16. Հանձնաժողովի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել հասարակական կազմակերպություններին և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

17. Հանձնաժողովի նախագահը՝

1) դեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

3) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք.

4) ստորագրում է հանձնաժողովի ընդունած որոշումները և արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված գրագրությունները.

5) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում:

18. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

2) հարցեր է ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը.

3) առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) ծանոթանում է հանձնաժողովի կողմից տրվող առաջարկություններին, եզրակացություններին և նախազեռին, հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, հանձնաժողովի որոշումներին և դրանց քվեարկության արդյունքներին, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում գրավոր կարծիք.

5) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.

6) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վարում է հանձնաժողովի նիստը, ստորագրում է իր կողմից նախագահած նիստի արձանագրությունը.

7) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

19. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքներին արդյունավետ և կանոնավոր իրականացումը.

2) հանձնաժողովի անդամներին է իրազեկում հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, տեղի և օրակարգի մասին .

3) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգը և այն ներկայացնում հանձնաժողովի նախագահի հաստատմանը .

4) նախապատրաստում է հանձնաժողովի նիստին քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը, սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի նախագահին և անդամներին .

5) արձանագրում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է արձանագրության նմուշները և ներկայացնում հանձնաժողովի նախագահի ստորագրությանը .

6) կազմում է հանձնաժողովի որոշումների նախագծերը և դրանք ներկայացնում հանձնաժողովի նախագահի հաստատմանը .

7) հանձնաժողովի անդամների պահանջով վերջիններիս է տրամադրում հանձնաժողովի նիստերի արձանագրության նմուշները, ինչպես նաև հանձնաժողովի որոշումները՝ նիստին նրանց մասնակցելու հանգամանքից .

8) հանձնաժողովի նախագահի հանձնարարության ամբ հրավիրում է հանձնաժողովի նիստերին այլ անձանց, իրազեկում հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, տեղի և օրակարգի մասին .

9) կազմում է հանձնաժողովի գործունեության հետ կապված գրազրույցի նմուշներին նախագծերը .

10) կատարում է հանձնաժողովի նախագահի այլ հանձնարարականներ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2012 թ.
դեկտեմբերի 28-ի N 1295 - Ն
նրոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ


ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Ասատրյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (հանձնաժողովի նախագահ)
Հ. Դարբինյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ֆ. Բերիկյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Օրբելյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ս. Բարսեղյան	- ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Ա. Միրզախանյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ
Ժ. Ասատրյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսության սոցիալական նորոգիչի ու ջեռանային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ
Ն. Հովհաննիսյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթական վարչության պետ
Ռ. Մտեփանյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի գործադրման ծրագրերի մեմոնդիքների և գիվարչության պետ
Ն. Դուրյան	- ՀՀ կառավարության առընթեր ՀՀ նստիկանության ՔՀԳԿ-ի 3-րդ վարչության պետի տեղակալ
Լ. Ղազարյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

- Մ. Անտոնյան - Երեխաների աջակցության կենտրոնի գործադիր տնօրեն
(համաձայնության ամբ)
- Մ. Թադևոսյան - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնության ամբ)
- Մ. Շահվերդյան - «Առավոտ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնության ամբ)
- Ա. Հովհաննիսյան - «Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ (համաձայնության ամբ)
- Մ. Խաչատրյան - Հայաստանի մանուկների հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնության ամբ)
- Ա. Քոչարյան - «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն (համաձայնության ամբ)
- Ա. Մնացականյան - Հայ օգնության միության ծրագրերի պատասխանատու (համաձայնության ամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ





Համարը N 98-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2008.04.02/21(611)
Հոդ.298

Ընդունող մարմինը ՀՀ վարչապետ
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 03.04.2008

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 25.02.2008
Ստորագրման ամսաթիվը 25.02.2008
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՇՎԱՆՂԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 747-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2008 թվականի N 98-Ն

ՀԱՇՎԱՆՂԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 747-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նպատակով՝

1. Ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով:

2. Հաստատել՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատանքային գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝ ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովներ:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետին կից՝ հաշմանդամների հարցերով զբաղվող խորհուրդ ստեղծելու մասին» N 747-Ն որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ս. Սարգսյան

2008 թ. փետրվարի 25
Երևան

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2008 թ.
փետրվարի 25-ի
N 98-Ն որոշման

Ա Շ Ն Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՇՄԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՐԿՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՐԱՊ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելն է:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև սույն աշխատակարգով:
3. Հանձնաժողովը հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների գործունեության կարգը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՋԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝
 - 1) հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելը.
 - 2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ մշակելը.
 - 3) հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների, հասարակական կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովման, սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցելը.
 - 4) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և այլ ոլորտում գործող հասարակական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն աջակցելը.
 - 5) հաշմանդամության իրավիճակի մասին ամենամյա ազգային զեկույցի քննարկումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար՝
 - 1) համապատասխան պետական լիազոր մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ է ներկայացնում առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարության և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրի իրականացման վերաբերյալ.
 - 2) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրի նախագիծը և տալիս եզրակացություն՝ այն Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար.
 - 3) համապատասխան ոլորտի լիազոր մարմիններ է ներկայացնում առաջարկություններ հաշմանդամ և ոչ հաշմանդամ անձանց համար հնարավորությունների հավասարեցման վերաբերյալ.
 - 4) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը և ներկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման վերաբերյալ.
 - 5) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ տալիս եզրակացություն.
 - 6) ուսումնասիրում և վերլուծում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտման պատճառները և համապատասխան ոլորտի լիազոր մարմիններ ներկայացնում առաջարկություններ.
 - 7) ուսումնասիրում և վերլուծում է հաշմանդամության առաջացման պատճառները և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.
 - 8) քննարկում է հաշմանդամության իրավիճակի մասին ազգային զեկույցի նախագիծը և ներկայացնում առաջարկություններ.
 - 9) քննարկում և Հայաստանի Հանրապետության վարչապետին, նախարարներին, մարզպետներին (Երևանի քաղաքապետին), տեղական ինքնակառավարման մարմիններ է ներկայացնում քաղաքացիների դիմումների և բողոքների վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.
 - 10) տվյալ ոլորտի լիազոր պետական մարմին է ներկայացնում առաջարկություն՝ հաշմանդամ և ոչ հաշմանդամ մարդկանց համար ստեղծված հնարավորությունների հավասարեցման գործընթացների զարգացումները վերահսկելու, որոշակի խնդիրներ հետազոտելու և վերլուծելու, արդյունքները հանձնաժողով ներկայացնելու համար.
 - 11) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների հաշվետվությունները, նիստերում լսում նրանց կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:
7. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից:
8. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքներով:
9. Հանձնաժողովի որոշումներն ունեն երաշխավորական բնույթ:
10. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը

գումարվում են առնվազն յուրաքանչյուր 4 ամիսը մեկ անգամ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հանձնաժողովի նախագահի կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ: Տարվա ընթացքում մեկ նիստ գումարվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ:

11. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ, նրա հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը: Հանձնաժողովի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստն սկսվելուց 7 օր առաջ: Հանձնաժողովի նիստն իրավագործ է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն:

12. Հանձնաժողովը պետական կառավարման մարմիններից կարող է ստանալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության հարցերին առնչվող նյութեր, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների հատուկ գրավոր կարծիքները կցվում են արձանագրությանը: Հավասար ձայների առկայության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Արձանագրությունը հանձնաժողովի անդամներին է ուղարկվում նիստից ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում:

14. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել պետական մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

15. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

3) հրավիրում է հանձնաժողովի նիստերը.

4) ստորագրում է հանձնաժողովի ընդունած որոշումներն ու արձանագրությունները, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության հետ կապված գրությունները.

5) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում.

6) իրականացնում է սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

16. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

2) հարցեր և առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը.

3) ներկայացնում է առաջարկություններ հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

5) կատարում է հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները:

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում հանձնաժողովի անդամներին.

2) հանձնաժողովի անդամներին իրազեկում է հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա, վայրի և ժամի մասին.

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները.

4) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

5) նիստերի որոշումները և արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ուղարկում է հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2008 թ.
փետրվարի 25-ի
N 98-Ն որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱԴԿՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Համբարձումյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարար
(հանձնաժողովի նախագահ)

Հ. Դարբինյան

ՀՀ առողջապահության նախարարի առաջին
տեղակալ

Գ. Մալխասյան

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Պ. Սաֆարյան

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ

Բ. Եսայան

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Վ. Տերտերյան

ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Տ. Հարությունյան

ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Հ. Աբրահամյան

Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ (համաձայնությամբ)

Ա. Ալավերդյան

«Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Ա. Գրիգորյան

«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Ս. Թադևոսյան

«Հույսի կամուրջ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Ա. Հակոբյան

«Հայաստանի կույրերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Ա. Մկրտչյան

«Սկարպ» առողջական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Լ. Ներսիսյան

«Աստղիկ» հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Ս. Օհանյան

«Հաշմանդամների «Փարոս» կրթության և մշակույթի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Զ. Բաղդասարյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի

(Կազմը փոփ. 20.08.08 N 649-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Ս. Թովուզյան

P<ARMTADEVOSYAN<<SUSANNA<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<
AN05992473ARM5910139F2308021<<<<<<<<<<<<<<<<02